«ԲԼԵՋԱՆ»
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ,ՍՈՑԻԱԼԱԿԱՆ,
ԲԻԶՆԵՍԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԿ

“BLEJAN”
ECOLOGICAL, SOCIAL,
BUSINESS SUPPORT NGO

Հասցե. ՀՀ, ք. Գավառ, Դաշտոյան 1-ին նրբանցք, տուն 16
Հեռ. (0264) 2-11-57, բջջ. (077) 76 46 41
Web: www.blejan.org
Էլ. Փոստ. blejanli@gmail.com, info@blejan.org

Address.RA,Gegharkunikmarz,Gavar,Dashtoyanst.1/16
Tel.:+374 264 2 11 57, mob: +374 77 76 46 41
E-mail: blejanli@gmail.com

ԲԼ–Գ–001 08.01.2019

Բնապահպանության և ընդերքի տեսչական
մարմնի ղեկավար Արթուր Գրիգորյանին

Հարգելի պարոն Գրիգորյան

Դեկտեմբերի 17-ին Գեղարքունիքի մարզպետարանում տեղի ունեցավ հերթական աշխատանքային խորհրդակցությունը՝ Սևանա լճում սիգ ձկան որսի արգելքի ժամկետների հետ կապված, որին մասնակցում էին ՀՀ բնապահպանության նախարարության, «Սևան» Ազգային պարկի, ՀՀ ընդերքի և բնապահպանական պետական տեսչության, ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության, մարզպետարանի բնապահպանության և գյուղատնտեսության վարչության ներկայացուցիչներ, Սևանա լճի ափամերձ համայնքների ղեկավարներ:

Հիշեցնեմ, որ 2005թ-ից ՀՀ բնապահպանության նախարարի հրամանով արգելված է Սևանա լճում արդյունագործական ձկնորսությունը, բայց չգիտես ինչու արդեն շուրջ տասներեք տարի՝ ամեն տարվա վերջին, ՀՀ բնապահպանության նախարարը նոր հրաման է ստորագրում՝ սիգի ձվադրման շրջանի պատճառաբանությամբ արգելելով իր հրամանով դեռևս 2005-ից ընդհանրապես արգելված ձկնորսությունը:

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, Ոստիկանությունը, Բնապահպանության նախարարությունը՝ ի դեմս «Սևան» Ազգային պարկի և Գեղարքունիքի մարզպետարանը, համաձայն համատեղ գործողությունների ծրագրի, դեկտեմբերի 20-ից հունվարի 20-ն ընկած ժամանակահատվածում պետք է իրականացնեն ուժեղացված ռեժիմով հսկողություն՝ Սևանա լճում ապօրինի որսը կանխարգելելու համար: Այո՛, Սևանա լճում և ոչ թե շուկաներում:

Եթե ձուկը ջրից դուրս է հանվել, արդյո՞ք անիմաստ չէ շուկաներում ձուկ վաճառողներին տուգանելն ու բերման ենթարկելը:

Ոչ մի տարի, այս տարին ևս բացառություն չէ, այդ արգելքը չի գործել և չի գործում: Երևանի ու մարզերի թույլատրելի և ոչ թույլատրելի շուկաներում մեծ քանակով վաճառվում է սիգ ձուկը: Առավոտյան վաղ մայրուղով անցնելուց լճի վրա կարելի է հաշվել անթիվ ու անհամար նավակներ, ինչը վկայում է, որ ոչ մի լողամիջոց ու որսագործիք էլ դուրս չի բերվել լճից:

Հարգելի պարոն Գրիգորյան

Դիմում ենք ձեզ պահանջով և խնդրանքով՝

1. ստուգումներ սկսել՝

- ուսումնասիրելու «Սևան» Ազգային պարկի հետ ձկնորսների պայմանագրերի առկայությունն ու դրանց բովանդակությունը,
- պարզելու լիճ մտնող բոլոր օրինական և ոչ օրինական նավակների թիվը, որսի թույլատրելի քանակներն ու որսագործիքների տեսակները (ոչ միայն սիգի),
- պարզելու սիգի արդյունագործական որսի արգելքի իրական հիմքերն ու ժամկետները

2. շուրջօրյա հսկողություն սահմանել ոչ թե ՀՀ շուկաներում, այլ լճի ափերին, որովհետև գտնում ենք, որ եթե ձուկը ջրից հանվել է, այն միևնույնն է՝ պետք է վաճառվի:

Կանխավ շնորհակալ եմ

Հարգանքով՝

ՀԿ նախագահ Լիաննա Ասոյան

Նամակին միացել են նաև՝

1) Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն ՀԿ-նախագահ՝ Սաթիկ Բաղեյան, ք. Սևան
2) Մարտունու կանանց համայնքային խորհուրդ ՀԿ-նախագահ՝ Անահիտ Գևորգյան,
3) ք. Մարտունի
4) Մարտունու «Տաթև» մարզական մշակութային և ձեռարվեստների ՀԿ- նախագահ՝

Տաթևիկ Գրիգորյան, ք. Մարտունի

5) ‹‹Բիոսոֆիա›› առողջապահության, բնապահպանության և գյուղատնտեսության զարգացման կենտրոն ՀԿ-նախագահ՝ Գևորգ Պետրոսյան, ք. Գյումրի
6) «Թռչնասերների կենտրոն» ՀԿ-նախագահ՝ Սիլվա Ադամյան, ք. Երևան
7) «Հայկական բուսաբանական ընկերություն» ՀԿ-նախագահ՝ Գոհար Օգանեզովա, ք. Երևան
8) «Բաց սահմաններ» ՀԿ—Նախագահ՝ Էլեոնորա Բոգոյան, գ. Նորատուս
9) Համայնքների զարգացնում և քաղաքացիական հասարակություն ՀԿ-Նախագահ՝ Արմեն Հովհաննիսյան, գ. Վարդենիկ
10) «Սևան» երիտասարդական ակումբ ՀԿ-Նախագահ՝ Գոհար Մնացականյան ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՂԵԿԱՎԱՐ

ИНСПЕКЦИОННЫЙ ОРГАН
ОХРАНЫ ПРИРОДЫ И НЕДР
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
РУКОВОДИТЕЛЬ
ENVIRONMENTAL PROTECTION AND MINING
INSPECTION BODY
OF THE REPUBLIC OF ARMENIA
HEAD

№ 111/24/844-19
«08» ապրիլի 2019թ.

Բլեջան» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության
ՀԿ նախագահ Լ. Ասոյանին

Հարգելի տիկին Ասոյան

Ի պատասխան 2019 թվականի հունվարի 8-ի ԲԼ-Գ-001 գրության՝ հայտնում եմ, որ Սևանա լճից «Սիգ» տեսակի ձկան ապօրինի որսը տարիներ շարունակ եղել և մնում է լճի կենսառեսուրսների պահպանման հիմնախնդիրներից մեկը, որը մտահոգության տեղիք է տալիս:

Ձեր կողմից բարձրացված հարցերը ունեն բազմաթիվ պատասխաններ, որոնք իրենց մեջ ներառում են սոցիալական, բնապահպանական ուղղվածություն և լճում ձկնապաշարի քանակի գիտական ուսումնասիրության արդյունքների պարզաբանումների խնդիրներ:

Տարիներ շարունակ լճից անօրինական ձկնորսությունը դարձել է սովորական երևույթ և լճի կենսաբազմազանության պահպանման և վերականգնման համար միայն ուժային կառույցների և տեսչական վերահսկողության խստացումը բավարար չէ. անհրաժեշտ է նաև հարակից համայնքների ազգաբնակչության, հասարակական կազմակերպությունների, պետական և այլ մտահոգ մարմինների աջակցությունը:

- Ձեր հարցադրումների ոչ բոլոր կետերն են հնարավոր պարզաբանել միայն ստուգումների միջոցով, քանի որ արդյունագործական որսի արգելքի իրական հիմքերը հիմնավորվում են ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոլոգիայի կենտրոնի մասնագետների կողմից, որոնք միայն հետազոտության արդյունքում են տալիս եզրակացություն լճում բնական կենդանական պաշարների չափաքանակների և դրանց որսի թույլտվության իրականացման վերաբերյալ:

- Ինչ վերաբերվում է շուրջօրյա հսկողության իրականացմանը, ապա տեսչական մարմինը իրականացնում է ոչ թե հսկողություն այլ վերահսկողություն և նրա գործողությունները ուղղված են օրենքի ներգործության միջոցների կիրառմանը:

Տեղեկացնեմ նաև, որ «Սիգ» տեսակի ձկան ձվադրման ժամանակահատվածում՝ 2018 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2019 թվականի հունվարի 20-ը, ուժեղացված հսկողություն իրականացնելու նպատակով ՀՀ բնապահպանության նախարարի, ՀՀ ոստիկանության պետի, Գեղարքունիքի մարզպետի և Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի կողմից ստորագրվել է աշխատանքների կատարման համատեղ միջոցառումների ծրագիր, որին համապատասխան, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի

Չարենցի փող. 46, 0025 Երևան, ՀՀ
46 Charents Str., 0025 Yerevan, RA

☎ +374 11 58 29 51
Էլ. փոստ՝ sargsyanigor@mail.ru
Веб-сайт: www.mnp.am

աշխատակիցները, Սևանա լիճի առափնյա հատվածներում, լիճը գոտևորող ավտոճանապարհի երկայնքով, հսկիչ կետերում, լճին հարակից համայնքների ձկան վաճառքի շուկաներում իրականացրել են վերահսկողական աշխատանքներ, որոնց արդյունքում միայն Գեղարքունիքի տարածքային բաժնի միջոցով շուրջ 1638 հատ 655,2կգ ընդհանուր քաշով առգրավված ձկները համապատասխանաբար անհատույց հանձնվել են Սևանի հոգեբուժական հիվանդանոցին, Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատին, Գավառի մանակատանը:

Գեղարքունիքի մարզպետարանի նաղաձեռնությամբ շուրջ 16000 հատ «Սիգ» տեսակի ձուկ անհատույց հանձնվել է տարբեր զորմասեր:

Արգելքի ժամանակահատվածում վերահսկողական աշխատանքներ են իրականացվել նաև Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի մյուս տարածքային բաժինների կողմից, որոնք համապատասխան մարզային ոստիկանության հետ համատեղ առգրավվել են շուրջ 1275 հատ «Սիգ» տեսակի ձուկ:

Նույն ժամանակահատվածում «Սևան ԱՊ» ՊՈԱԿ-ի աշխատակիցների հետ համատեղ ուժեղացված աշխատանքների արդյունքում առգրավվել են 2134 հատ «Սիգ» տեսակի ձուկ, 379 հատ ձկնորսական ցանց, 24 հատ խեցգետնորսիչ և ընդհանրապես 2018 թվականին հայտնաբերվել է ձկան ապօրինի որսի 67 դեպք, խեցգետնի ապօրինի որսի 8 դեպք, առգրավվել է 1943 հատ «Սիգ» տեսակի ձուկ, 254 հատ «Կարաս» տեսակի ձուկ և 753 հատ խեցգետին բաց է թողնվել Սևանա լիճ, լճից հանվել է 409 հատ ձկնորսական ցանց և 120 հատ խեցգետնորսիչ:

Արգելքի ժամանակահատվածում հյտնաբերված իրավախախտները օրենքով սահմանված կարգով ենթարկվել են վարչական և քրեական պատասխանատվության:

Հարգանքով՝
Տեսչական մարմնի ղեկավարի
պարտականությունները ժամանակավորապես կատարող՝

05.04.2019

X

ԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: Ekeng CJSC

Ի. Սարգսյան

Կատարող՝ Գեղարքունիքի տարածքային բաժին
0262 4 60 54